Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

,ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻԵ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ БАРЕГОРЦ ապրիլ, 2023, № 1 (57) BAREGORTS

Մեր հիմնադրամի կարևոր բարեգործական ծրագրերից մեկն էլ հայագիտական և գեղարվեստական կարևոր գրքերի հրատարակումն է կամ դրանց աջակցումը: Հիմնադրամի միջոցներով արդեն լույս են տեսել 44 անուն գրքեր, որոնցից մեկն էլ հմուտ գրաբարագետ, երբեմնի հոգևոր և հանրային գործիչ, ԵՊՀ դասախոս, խորհրդային իրականության մեջ հայ հոգևոր երգը առաջինը բեմ բարձրացրած և համերգային բարձրարվեստ կատարումներով հանրային լայն լսարանին ներկայացրած, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում «Հայ տոհմիկ երգչախումբը» հիմնած ու ղեկավարած Խորեն Պալյանի «Լոյս ի լուսոյ» գիրքն է՝ 2022 թ. լույս տեսած Երվանդ Տեր-Խաչատրյանի աշխատասիրությամբ : Այդ գրքի մասին դոկտոր Զավեն քահանա Արզումանյանի բնութագրական գրախոսությունը, որը հրատարակվել է Բոստոնի «Պայքար» օրաթերթի ապրիլի 9-ի համարում, սիրով ներկայացնում ենք «Բարեգործի» ընթերցողներին:

ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆԻ «ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ» ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Երևան, 2022

Հատուկ «Պայքար»-ին, դոկտոր Զավեն Ա քհն. Արզումանյան

Մասնագիտական բարձր մակարդակով լայնածավալ 515 էջ սույն գիրքը իր տեսակի մեջ անզուգական և վերջնագույն հրատարակություն մըն է՝ 2022 թվականին հրատարակված Երևանի մեջ խըմբագրությամբ և առաջաբանով Երվանդ Տեր - Խաչատուրյանի:

Անզուգական է, որովհետև հետին մանրամասնությամբ գրված է գրեթե ամեն ինչ Հայ եկեղեցվո շարականներուն և ժամերգությանց մասին, ու վերջնագույնն է, որովհետև ուրիշ անձ մը չպիտի ձեռնարկե նման աշխատանքի: Հատորին ներքին և թաքուն պայմանն է մեր եկեղեցականներուս անհոգություն ու անտարբերությունը հրավիրել մեր շարականներուն նկատմամբ, երբ այդ պատկառելի «Ձայնթաղ Շարական» օրինյալ խոշոր գիրքը մեկ կողմ դրած ենք, բացառությունները հարգելի, և չենք երգեր, ու միայն Սուրբ Պատարագի մատուցմամբ կգոհանանք:

Տաղանդավոր Խորեն Պալյան իր ուսանողական դժվար տարիներու ընթացքին, Խորհրդային Միութ-

յան արգելքներուն դիմացավ, կրցավ զանոնք հաղթահարել, և հասնել այս տեսակ աշխատանքի մը իրագործման՝ մեծագույն զոհողություններով: Անշուշտ հնագույն դարերու Հայ եկեղեցվո կազմավորման ընթացքը մեծապես ազդած է մեր շարականներու վերադասավորման, ու վերջնական կնիքը ստացած դարեր ետք: Ուրեմն պատմական շրջանները պետք է նկատի ունենալ տեղավորելու համար շարականներու զարգացման ուղին:

«Լոյս ի Լուսոյ» հատորիս հեղինակը «Վերագրումներ» հատկացուցիչը հաճախ կգործածե որոնք անխուսափելի էին նախնագույն դարերուն համար, մինչև 7-րդ դար, երբ շարականներու հեղինակները հետզհետե ճշտվեցան Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսեն սկսյալ և շարունակեցան մինչև Հովհան Օձնեցի,

Սուրբ Գրիգոր Նարեկացի, Սուրբ Ներսես Շնորհալի: Սակայն գիտենք թե մինչև 7-րդ դար Հայ եկեղեցին գոյատևեց 301 թվականեն սկսյալ, այդ մութ տարիներուն, երբ հայոց այբուբենը չկար, և Սուրբ Գիրքը հայերենի չէր թարգմանված մինչև 5-րդ դար: Միջանկյալ այդ 150 տարիներուն, 301 թվականեն մինչև 450 թվական, Հայ եկեղեցին անշուշտ երգեց հոգևոր երգեր առանց սակայն հայերեն գիր մը տեսնելու:

Հրաշքով մեր առաջին ինը (9) Հայրապետները Ս. Գրիգոր Լուսավորիչեն մինչև Ս. Սահակ Պարթև Հայրապետ կենսունակ պահեցին Հայ եկեղեցին՝ Սաղմոսները թարգմանաբար երգելով, պաշտամունք կատարելով առանց հայերեն Սուրբ Գիրքի և անշուշտ գոյություն ունեցող մեր դասական գրաբար լեզվով: Լեզուն կար, և սակայն գիրը չկար: Անոնք գործածեցին հունարեն կամ ասորերեն սուրբ գիրքը թարգ-մանաբար, որքան կարելի էր:

Վերագրումներ, այսինքն՝ անորոշ հեղինակություններ անհրաժեշտ եղան, ու որոշ շարականներ մեծ Սուրբերու, ինչպես Ս. Մեսրոպի, Ս. Սահակի, Մովսես Խորենացիի կամ այլոց անուններով մկրտվեցան:Պատմիչներ դարերու ընթացքին պարզապես իրարմե ընդօրինակեցին այդ «վերագրումները՝ այլընտրանք չունենալով: Կատարեցին նույնիսկ անկարելի նկատված ութ ձայներու գյուտը և վերագրեցին Ս. Սահակին և Ս. Մեսրոպին, ինչ որ շատ անհավանական կթվի այն պատճառով, որ այդ ութ ձայները ավելի ուշ՝ յոթներորդ դարուն միայն ձևավորվեցան Բարսեղ Ճոնի կողմե Ներսես Շինող (641 – 661)կաթողիկոսի օրով և Դվինի եկեղեցական մեկ ժողովին կանոնական ուժովը, անձամբ ինք ներկա ըլլալով, ինչպես կկարդանք Հովհան Օձնեցի վարդապետին խմբագրած «Կանոնագիրք Հայոց» հավաքածոյի մեջ: Այս մասին տեղեկություն չկա Խորեն Պալյանի գիրքին մեջ:

Կարևոր պատգամը ևս. Ս. Սահակ և Ս. Մեսրոպ իրենց առաջին աշակերտներուն հետ միասին սերտորեն զբաղ էին Աստվածաշունչին թարգմանության մեծ գործին որպես առաջնահերթություն: Անոնք միայն նախապես անգիր երգվածները ժառանգեցին ու զարգացուցին: Իրենց ժամանակը, 25 տարիներ, հատկացուցին թարգմանչական այդ մեծ աշխատանքին, որ շատ ավելի կենսական էր բաղդատմամբ շարականներուն:

«Լոյս ի Լուսոյ» գիրքին բովանդակությունը
Գիրքը երեք գլխավոր բաժիններ կբովանդակե.

Ա. Հոգևոր Երգի Լույսը.

Բ. Ժամանակագրությունք Հայ Եկեղեցվո.

Գ. Հոդվածներ և Հարցազրույցներ:

Առաջին բաժինը հատկացված է մեր Շարակնոցին, ուր ամենօրյա երգեր իրենց հատուկ կառուցվածքով քննարկված են, այսինքն՝ հաջորդաբար երգված «Օրհնութիւն»-ները, «Հարց»-երը և «Մեծացուսցէ»-ները, «Ողորմեա»- ներն ու «Տէր Յերկնից»-ները, որուն կհաջորդե «Փառք ի Բարձունս Աստուծոյ» հոգեզմայլ երգը: Խորեն Պալյան հատուկ քննության ենթարկած է թիվով 68 «Մեծացուսցէ անձն իմ զՏէր» գողտրիկ շարականները՝ ութ ձայներու վրա բաշխված, բոլորն ալ նվիրված Աստվածամոր՝ Մարիամին: Անոնց կորիզը կկազմեն նախ Սուրբ Աստվածածնին հատուկ առաքինություններուն, ու ապա մեղավորներուն համար, միջնորդական դերին՝ իր Որդվույն և մեր Փրկչին ընդառաջ:

Վարդան Վարդապետ պատմիչ, որ Շիրակի Դպրեվանքին Վանահայր պատմիչը եղած է, կգրե, թե «Յարության վերաբերյալ շարականներու ութ ձայները շատեր Մովսես Խորենացիին կվերագրեն, ուրիշներ՝ յոթներորդ դարու Բարսեղ Ճոն կոչված երաժիշտին»: Երկրորդ վարկածը ավելի կհիմնավորվի, երբ նկատի ունենանք շարականներու ոճը, լեզուն, և խոսքի գեղարվեստական բնույթի հանգամանքը, որոնք կհաստատեն ոչ թե 5-րդ դարու, այլ յոթներորդ դարու գործ մը ըլլալը, ոչ թե վերագրելով, այլ հատկացնելով Բարսեղ Ճոնին, որուն համար ալ մեր պատմիչները մեր շարականները «Ճոնընտիր» կոչած են:

Երկրորդ բաժինը, Հայ Եկեղեցու օրական ժամերգությունները կքննե ամենայն մանրամասնությամբ: Եթե առաջին բաժինը Շարակոցի քննարկումն էր, երկրորդը Ժամագիրքին քննարկումը եղավ իր ինը (9) ժամերգություններով՝ Գիշերային, Առավոտյան, Երեք ճաշու ժամերու, Երեկոյան, Արևագալի, Խաղա-ղականի և Հանգստյան: Գիրքին հեղինակը Ժամագիրքն է զոր կներկայացնե իր խտացյալ կառույցին մեջ՝ հետևելով 10-րդ դարում մեծ աստվածաբան Խոսրով եպիսկոպոս Անձևացիի «Մեկնություն Ժամանակագրության» բացառիկ և մեկնողական գիրքին: Հնատիպ այդ գիրքեն օրինակ մը ունիմ գրադարանիս մեջ ու զայն հաճախ օգտագործելու բարիքը կվայելեմ:

Խորեն Պալյան մեջընդմեջ օգտագործած է նաև հետևալ մեծ հեղինակներու մեկնողական գործերը ևս՝ Հովհան Օձնեցիի, Ներսես Շնորհալիի, Պետրոս Գետադարձի, Հովհաննես Դարդելի, Եպիփան Կիպրացիի,

Ստեփաննոս Սյունեցիի, Գրիգոր Նարեկացիի և Մաղաքիա Օրմանյանի ժամապաշտությանց իմաստն ու պատգամը ավելի հեղինակավոր դարձնելու համար:

Երրորդ բաժինը Խորեն Պալյանի հոդվածներեն ու կարգ նը հարցազրույցներե կբաղկանա, որոնց մեջ ակնառու է գրաբար լեզվին հատուկ ուսումնասիրությունն ա Ստեփանավանի նորաշեն Ս. Սարգիս եկեղեցու օծման կարգը:

Գլենդել

2023 թ. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ

Հ/հ	Ամսաթիվ	ԲՈՒՀ	Նպատակ	Գումար
1	1/17/2023	Բաբաջանյանի անվան պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ, Անդրեասյան Ալբերտ	10000
2	1/17/2023	Բաբաջանյանի անվան պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ, Մարտիրոսյան Անահիտ	10000
3	1/17/2023	Շ Ազնավուրի անվ. մշակ և արվ պետ քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ Ստեփանյան Եսթեր	10000
4	1/17/2023	Կոմիտասի անվան ԵՊԿ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ Սիմոնյան Լիանա	10000
5	1/17/2023	Ռ Մելիքյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ Մանուկյան Ալիսա	10000
6	1/17/2023	ԵՊՀ հիմնադրամ	Խորեն Պալյանի անվ. կրթաթոշակ, Հայրապետյան Անգելինա, հայ բանասիր 3-րդ կուրս	20000
7	1/17/2023	ԵՊՀ հիմնադրամ	Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Միրաքյան Էլեն, հայ բանասիր., 4-րդ կուրս	30000
8	1/17/2023	ԵՊՀ հիմնադրամ	Դոկտոր Նազելի և Դավիթ Չարչյանների անվ. կրթաթոշակ, Գասպարյան Աննա, ֆարմացիա, 4-րդ կուրս	30000
9	2/13/2023	Բաբաջանյանի անվան պետ երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ Անդրեասյան Ալբերտ	10000
10	2/13/2023	Բաբաջանյանի անվան պետ երաժշտ քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ, Մարտիրոսյան Անահիտ	10000
11	2/13/2023	Շ. Ազնավուրի անվ մշակ և արվ պետ քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ Ստեփանյան Եսթեր	10000
12	2/13/2023	Կոմիտասի անվան ԵՊԿ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ Սիմոնյան Լիանա	10000
13	2/13/2023	Ռ Մելիքյանի անվան պետ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ, Մանուկյան Ալիսա	10000
14	2/13/2023	ԵՊՀ հիմնադրամ	Խորեն Պալյանի անվ. կրթաթոշակ, Հայրապետյան Անգելինա, հայ բանասիր., 3-րդ կուրս	20000
15	2/13/2023	ԵՊՀ հիմնադրամ	Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Միրաքյան Էլեն, հայ բանասիր., 4-րդ կուրս	30000
16	2/13/2023	ԵՊՀ հիմնադրամ	Դոկտոր Նազելի և Դավիթ Չարչյանների անվան կրթաթոշակ, Գասպարյան Աննա, ֆարմացիա, 4-րդ կուրս	30000

17	2/22/2023	Մխ. Հերացու անվան ԵՊԲՀ	Օգնություն ուսման ծրագիր, Մկրտչյան Անահիտ ընդհ բժշկութ 1-ին կուրս	50000
18	2/22/2023	ՀՊՏՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, ֆինանսներ, Կոստանյան Մարինա 4-րդ կուրս	50000
19	2/22/2023	Կոմիտասի անվ. ԵՊԿ	Օգնություն ուսման ծրագիր Ալիխանյան Դավիթ ժող. գործիքներ, 3-րդ կուրս	50000
20	2/22/2023	Մխ.Հերացու անվան ԵՊԲՀ	Օգնություն ուսման ծրագիր Սողոմոնյան Մարիամ, ընդհ. բժշկություն, 4-րդ կուրս	50000
21	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Հակոբյան Սվետլանա, ԵԼՀ անգլ. իսպ. և հաղորդ, 4-րդ կուրս	50000
22	2/22/2023	ԵԹԿՊ ինստիտուտ	Օգնություն ուսման ծրագիր Ոսկանյան Կարեն, դերասանական արվեստ ՄԿԾ, 4-րդ կուրս	50000
23	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուս. ծրագ., Մարտիրոսյան Գայանե, ԵԼՀ անգլ. և հաղորդ. իսպ, 4-րդ կուրս	50000
24	2/22/2023	ԵԹԿՊ ինստիտուտ	Օգնություն ուսման ծրագիր, թատեր. արվ.Գևորգյան Սերժ, 1-ին կուրս	50000
25	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, ԵԼՀ, Երանոսյան Մանե, 2-րդ կուրս հեռ.	50000
26	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, սերվիս, Հարությունյան Աննա, 4-րդ կուրս	50000
27	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր. Գրիգորյան Մարիամ, իրանագիտ., 1-ին կուրս	50000
28	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր ԵԼՀ, Սողոմոնյան Անահիտ, 3-րդ կուրս	50000
29	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, Ասլանյան Հայկուշ ԵԼՀ թարգմանչ 2-րդ կուրս	70000
30	2/22/2023	Մխ. Հերացու անվան ԵՊԲՀ	Օգնություն ուսման ծրագիր, Սաղաթելյան Մարինե, ընդհ. բժշկություն, 2-րդ կուրս	70000
31	2/22/2023	ՀՊՏՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, Եզեկյան Ձուլետտա, շուկայագիտ 2-րդ կուրս	70000
32	2/22/2023	Մխ. Հերացու անվան ԵՊԲՀ	Օգնություն ուսման ծրագիր Սիմոնյան Սարգիս, ատամնաբուժ. 2-րդ կուրս	75000
33	2/22/2023	Մխ. Հերացու անվան ԵՊԲՀ	Օգնություն ուսման ծրագիր, Ղարագյոզյան Տաթևիկ, ընդհան. բժշկություն, 2-րդ կուրս	75000
34	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Ղարագյոզյան Լիլիթ, թյուրքագիտ. 3-րդ կուրս	75000

35	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Հակոբջանյան Լիլիա, թյուրքագիտ., 3-րդ կուրս	80000
36	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Սիրունյան Հայկ, հայ բանասիր մագիստր, 1-ին կուրս	80000
37	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, Հողմրցյան Էդգար, կիրառ վիճ և տվյալ գիտ, 1-ին կուրս	80000
38	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, Զաքարյան Ամալյա,բանասիր., 2-րդ կ.	80000
39	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, սերվիս, Ավետիսյան Տարոն, մագ. 2-րդ կուրս	80000
40	2/22/2023	Մխ. Հերացու անվան ԵՊԲՀ	Օգնություն ուսման ծրագիր, Ղազարյան Մոնիկա, ատամնաբուժ. 5-րդ կուրս	80000
41	2/22/2023	ՀԱԱՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, Մարկոսյան Հակոբ, սննդարդյունաբ. էկոնոմիկա 5-րդ կուրս	80000
42	2/22/2023	ՀԱԱՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Սարգսյան Իշխան, սննդարդյունաբ. էկոնոմիկա 5-րդ կուրս	80000
43	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, Օհանյան Նարեկ, թյուրքագիտ 3-րդ կուրս	100000
44	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, ԻԿՄ, Առստամյան Գոհար, 1-ին կուրս,	100000
45	2/22/2023	Խ Աբովյանի անվան ՀՊՄՀ	Օգնություն ուսման ծրագիր, Ավետիսյան Անահիտ, ՕԼՖ 3-րդ կուրս	100000
46	2/22/2023	Խ Աբովյանի անվան ՀՊՄՀ	Օգնություն ուսման ծրագիր, Տոնոյան Հասմիկ մանկավարժ և մեթոդիկա, 1-ին կուրս	100000
47	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր ԵԼՀ, Խաչատրյան Սնեժանա,1-ին կուրս,	100000
48	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Անտոնյան Մերի, ժուռնալիստ 2-րդ կուրս	100000
49	2/22/2023	Կոմիտասի անվան ԵՊԿ	Օգնություն ուսման ծրագիր, Տիգրանյան Ալբերտ, ակադեմ. երգեցողություն մագիստր. 2-րդ կուրս	100000
50	2/22/2023	ՀԱՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, Մկրտչյան Գոռ, ՏՀՏԷ ինստիտուտ ՀՊՏ 9242 խումբ, 4-րդ կուրս	100000
51	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Ղալաչյան Արթուր, թյուրքագիտ. 3-րդ կուրս	100000

52	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, Գասպարյան Նարեկ, ռադիոֆիզիկա 2-րդ կուրս	100000
53	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Խաչատրյան Հարություն, ռադիոֆիզիկա, 2-րդ կուրս	100000
54	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Ասծատրյան Վարդան, կիրառ հոգեբան մագիստր 1-ին կուրս	100000
55	2/22/2023	Մխ. Հերացու անվան ԵՊԲՀ	Օգնություն ուսման ծրագիր Թանգամյան Շանթ, ընդհանուր բժշկություն 2-րդ կուրս, 235 խումբ,4-րդ հոսք	100000
56	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Կարապետյ ան Վարդան, ռադիոֆիզիկա, 2-րդ կուրս	100000
57	2/22/2023	ՀԳՊԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ	Օգնություն ուսման ծրագիր, Հարությունյան Գենրիկ, դիզայն 4-րդ կուրս	150000
58	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, Չոլաքյան Հակոբ, իրավագիտ. 2-րդ կուրս	150000
59	2/22/2023	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, Եղիազարյան Սամվել, գործարար վարչարար, մագիստր 3-րդ կուրս, հեռակա	150000
60	2/22/2023	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր, դիզայն Ոսկանյան Լուսինե, 3-րդ կուրս	150000
61	2/23/2023	Հայաստանում եվրոպական քոլեջ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Հովհաննիսյան Էմմա, լեզվաբան, 2-րդ կուրս	50000
62	2/23/2023	ՀԱԱՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր Հայրապետյան Դանիել ՀԱԱՀ գյուղ քոլեջ ֆինանսներ, 2-րդ կուրս	80000
63	2/24/2023	Հայաստանի ֆիզկուլտ և սպորտի պետ ինստիտուտ	Օգնություն ուսման ծրագիր Սիմոնյան Ակոպ, կինեզոլոգիա 1-ին կուրս	75000
64	2/24/2023	ՀԱՊՀ Վանաձորի մ/ճ	Օգնություն ուսման ծրագիր, Բեգլարյան Սևակ, ծրագր. ճարտարապ 1-ին կուրս	100000
65	3/3/2023	ՄՊՀ Երևանի մ/ճ	Օգնություն ուսման ծրագիր, Թորգոմյան Ժիրայր, միջազգ. հարաբ. մագիստր 2-րդ կուրս	120000
66	3/10/2023	Բաբաջանյանի անվան պետ երաժշտ քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ, Անդրեասյան Ալբերտ	10000
67	3/10/2023	Բաբաջանյանի անվան պետ երաժշտ քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ, Մարտիրոսյան Անահիտ	10000
68	3/10/2023	Շ Ազնավուրի անվ մշակ, և արվ, պետ, քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ Ստեփանյան Եսթեր	10000

69	3/10/2023	Կոմիտասի անվան ԵՊԿ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ Սիմոնյան Լիանա	10000
70	3/10/2023	Ռ Մելիքյանի անվան պետ երաժշտ քոլեջ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթաթոշակ Մանուկյան Ալիսա	10000
71	3/10/2023	ԵՊՀ հիմնադրամ	Խորեն Պալյանի անվ. կրթաթոշակ, Հայրապետյան Անգելինա, հայ բանասիր., 3-րդ կուրս	20000
72	3/10/2023	ԵՊՀ հիմնադրամ	Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Միրաքյան Էլեն հայ բանասիր. 4-րդ կուրս	30000
73	3/10/2023	ԵՊՀ հիմնադրամ	Դոկտոր Նազելի և Դավիթ Չարչյանի կրթաթոշակ , Գասպարյան Աննա, ֆարմացիա, 4-րդ կուրս	30000
74	3/10/2023	Եվրոպական համալսարան հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր. Խաչատրյան Սամվել, տեղեկատվ. տեխն. 1-ին կուրս	70000
Ընդամենը՝				4 560 000

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

Հիմնադրամի հոգաբարձության խորհրդի ս/թ ապրլի 17-ի նիստի որոշմամբ պատվոգրով և ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ հուշամեդալով պարգևատրվում են հետևյալ անձինք՝

- Դոկտոր Ռաֆֆի Պալյան – բարերար, հիմնադրամի վաղեմի և նվիրյալ բարեկամ
- Արմոնդ Վարդանյան –բարերար, ԱՄՆ-ում հիմնադրամի լիազոր ներկայացուցիչ
- Թագուհի Արզումանյան – բարերար, հիմնադրամի վաղեմի և նվիրյալ բարեկամ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Խորին երախտագիտությունս եմ հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանին ուսմանս վարձը մուծելու հարցում ինձ օգնելու համար:

Կաշխատեմ այնպես սովորել և այնպիսի մասնագետ դառնալ, որ իմ աշխատանքով և հայրենիքիս նվիրվածությամբ կարողանամ փոխհատուցել Ձեր խորապես մարդասիրական և ազգանվեր աջակցության դիմաց:

Խորին հարգանքով՝ ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի ուսանող՝
ՍԵՎԱԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԽՐՈՒՆԻ

Ցավով տեղեկացանք մեր հիմնադրամի հոգաբարձության խորհրդի բարեխիղճ անդամների հարազատների՝ Թոնի Կավեի մոր՝ **Սիմա Ազարյանի**, և Վարուժան Սիրապյանի տիկնոջ՝ **Ամպեր Սիրապյանի** կորստյան լուրը:

Հանգուցյալներից յուրաքանչյուրը մեր ժողովրդի դառը ճակատագրի կրողն է, նրա պատմության մի մասնիկը: Հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը իր խորին ցավակցությունն է հայտնում Թոնի Կավեին և Վարուժան Սիրապյանին նրանց հարազատների մահվան կապակցությամբ:

«Գազպրոմ Արմենիա» ուսումնա-սպորտային համալիրը Արցախի կողքին է

*«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկը **1.000.000** ՀՀ դրամ է հատկացրել «Գուրգեն Մելիքյան» Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների աջակցության հիմնադրամին:* Նշված գումարը հավաքվել է տարեվերջին Կրթահամալիրում կազմակերպված ցուցահանդեստոնավաճառի ժամանակ, որն ավանդական միջոցառում է և կազմակերպվում է չորրորդ անգամ: Նպատակն է հավաքված գումարով օգնել սահմանամերձ գյուղերի դպրոցներին: Այդպիսի հաջողված փորձ արդեն եղել է. օգնել ենք Տավուշի մարզի Չորաթան, Արցախի Մարտակերտի շրջանի Մեծ-Շենի, Սյունիքի մարզի Դավիթ Բեկ, «Գուրգեն Մելիքյանի» Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին՝ Աղավնո, Հին Շեն, Մեծ Շեն, Լիսագոր և Եղցահող համայնքների դպրոցներին: «Գազպրոմ Արմենիայի» կրթահամալիրում սովորող աշակերտների յուրօրինակ ստեղծագործություններից վաճառված և հավաքագրված գումարից հատկացվել է 1 միլիոն դրամ: Կրթահամալիրի տնօրեն Ալեքսանդր Գրիգորյանը Գուրգեն Մելիքյանի հետ հանդիպմանը շնորհակալություն է հայտնել հիմնադրամին հսկայական աշխատանքի համար, նշել՝ այն աշխատանքը, որն այս տարիների ընթացքում Արցախում իրականացրել է «Գուրգեն Մելիքյան» Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների աջակցության հիմնադրամը, անգնահատելի է. *«Արցախն այսօր առավել քան երբևէ ունի մեր օգնության, միասնականության կարիքը: Այս գաղափարը չէր իրագործվի, եթե մեր ամբողջ թիմը միասնական մոտեցում չցուցաբերեր:Կարծում եմ՝ հիմնադրամի հետ համագործակցությունն այսքանով չի ավարտվի, մենք պատրաստ ենք օգնելու այն բնակավայրերին, որոնք իսկապես ունեն դրա կարիքը»:*

Գուրգեն Մելիքյանը շնորհակալություն է հայտնել կրթահամալիրին և նշել՝ գումարը հատկացվելու է Արցախի Հին Շեն, Մեծ Շեն, Լիսագոր և Եղցահող գյուղերի դպրոցներին. *«Դժվար է ինչ-որ բան ասել հիմա, երբ վերջացել է 44-օրյա պատերազմը: Մղձավանջը ավարտվել է, բայց մենք դեռ երկար ենք զգալու այն ցավը, որ կա մեր ներսում: Այն չի մոռացվելու, և իրավունք էլ չունենք մոռանալ, քանի որ ունենք անդառնալի կորուստներ. զոհեր, բազում վիրավոր զինվորներ, դեռևս անորոշության մատնված ու շրջափակման մեջ գտնվող Արցախ աշխարհ: Հսկայական օգնություն եք ցուցաբերում Արցախի մեր հայրենակիցներին, որոնք, ամենօրյա զրկանքներ կրելով, դիմակայում են թշնամու անսանձ նկրտումներին: Մեր հայրենակիցների համար չկա առավել բարձր ու սրբազան պարտականություն, քան ամենժամյա վտանգներից չվախենալով՝ ապրել ու արարել մեր պապենական հողի վրա»:*

«Գազպրոմ Արմենիա» ուսումնա-սպորտային համալիրը դեռ երկար կշարունակի իր բարեգործական արշավը Արցախում: Կրթահամալիրում սովորող յուրաքանչյուր աշակերտ և մանկավարժ վստահ է՝ ցանկացած լավ գործ մարդուն ավելի լավը, ավելի բարի է դարձնում:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ Աշակերտ. խորհրդի նախագահ՝ Էրիկա Պետրոսյան, 8-րդ դասարան

Հուշագրի ստորագրումը

Գուրգեն Մելիքյանը Ալեքսանդր Գրիգորյանի հետ

Հուշագրի ստորագրումից հետո

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ

1. Արցախ Բունիաթյան, Արյունոտ օրեր. Մարտակերտ, 1993, գիրք 3, 2000, 402 էջ:
2. Հայկ Դեմոյան, Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը, 2002:
3. Սամվել Մուրադյան – Գրական հանգրվաններ ,Գիրք Ա ,Եր. 2003, 496 էջ:
4. Հրաչիկ Սիմոնյան, Ազատագրական պայքարի ուղիներում , գիրք 1-ին, 2003, 814 էջ:
5. Հենրիկ Էդոյան, Հին եգիպտական մեռյալների գիրքը , Եր. 2004, 260 էջ:
6. Արծրուն Ավագյան, Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի , Եր., 2004, 277 էջ:
7. Լևոն Եզեկյան, Հայոց լեզու, Եր. 2005, 398 էջ:
8. Արտաշես Պապոյան, Հայագիտական հետազոտություններ, Եր.2007թ., 836 էջ:
9. Ներսես Մկրտչյան, Հայերենից փոխառյալ բառեր թուրքերենի բարբառներում, Եր. , 2007, 318 էջ:

10. Լուսինե Սահակյան, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Եր., 2007, 307 էջ:
11. М.Мелкумян, Русский язык, Եր. 2010, 100 էջ:
12. Աբովյանագիտական 5 (հոդվածների ժողովածու),Եր. 2012, 120 էջ:
13. Գոհար Մարտիկյան, Ապրելու բանաձև, Եր. 2014, 343 էջ:
14. Վարուժան Խաստուր, Քառյակներ , 2014, 192 էջ:
15. Լենդրուշ Ալոյան, «Մշակ»- ի հրապարակախոսները 19-րդ դարավերջ, 20-րդ դարասկիզբ, Եր.2014, 256 էջ:
16. Արթուր Իսրայելյան, Դիվանագիտական և քաղաքական տերմինների հայերեն-արաբերեն բառարան, Եր ., 2014, 112 էջ:
17. Վարդան Պետրոսյան, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր. 2015, 347 էջ:
18. Ն. Հովհաննիսյան – Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրությունների կողմից,Եր., 2015,175 էջ:
19. Թադևոսյան, Չարչյան, Միջին պարսկերեն և պարթևերեն ուսումնամեթոդական ձեռնարկ , Եր. , 2015, 45 էջ:
20. Նիկոլայ Հովհաննիսյան, Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հեռանկարները , Եր., 2015, 52 էջ:
21. Արևելագիտության հարցեր (հոդվածների ժողովածու), h. 10, Եր. 2015:
22. Սարգիս Մխիթարյան, Հույս և սպասում, Եր. 2015, 152 էջ:
23. Լուսինե Սահակյան, Համշենը հայկական ձեռագրերում. գունավոր ներդիր և մեկ քարտեզ,Եր., 2019, 363 էջ:
24. Ստեփան Ալաջաջյան, Չսպիացած վերք, h.1, Եր., 2019, 559 էջ, h. 2, 601 էջ, h. 3, 495 էջ:
25. Հենրիկ Մ. Աբրահամյան- Հայաստանի անկախացման հասարակական – քաղաքական նախադրյալները և կայացման սկիզբը ,Եր., 2020, 396 էջ:
26. Արման Նավասարդյան, Հերմեսից մինչև մեր օրերը, Գիրք Ա , Եր. 2020, 160 էջ:
27. Ալեքսան Յակոբեան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում և Հայոց Արևելից Կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար , Եր. 2020, 440 էջ:
28. Karimi Majid, Caucasian Tats – Persian Speakers of the Eastern Transcaucasia,translated by Shadi Karimi,Yerevan State University, 2020, 440 p.
29. Karen Ohanj(Ohanjanyan)-Karabakh Again… a novel and a short story,Yerevan 2021.- 1, 131 p.
30. Սամվել Դիլանյան, Հին ու նոր հավատալիքներ, 2021, 256 էջ:
31. Փառանձեմ Մեհթիխանյան, Հայոց անվանարանը, ԵՊՀ հրատ., Եր., 2021, 480 էջ:
32. Քրիստինե Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ (1798-1829), Մատենադարան, Եր.,2021, պրակ 5, 575 էջ:
33. Սերգեյ Աղաջանյան, Մշակույթի տեսություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Երևան, 2021թ., 356 էջ
34. Ստեփան Ալաջաջյան, Եղեգները չխոնարհվեցին, Եր., 2022, 499 էջ:
35. Երվանդ Տեր-Խաչատրյան, Խորեն Պալյան, Եր., 2022 թ. 515 էջ:
36. Ֆլորա Սարյան, Երբ աստղերն են վայր ընկնում, Եր., 2022, 279 էջ:
37. Ֆլորա Սարյան, Չգրված օրենք, Եր., 2022, 279 էջ:
38. Բաբկեն Չուգասզյան, Երկերի Ժողովածու, h. Ա, Եր., 2022, 512 էջ:
39. Հեղինե Գասպարյան , Լյուդվիգ Ղարիբջանյան, Եր., 2022, 79 էջ:
40. Շմավոն Շմավոնյան, Արարատ, 115 էջ:
41. Մարտին Բաղդասարյան, Աղետ, 2022, 377 էջ:
42. Արծրուն Ավագյան, Ստեփան Ալաջաջյան, Եղեգները չխոնարհվեցին վեպի վերահրատարակում, «Լուսակն» հրատ., Եր., 2022, 67 էջ:
43. Խաչատուր Թահմազ, Համշենի բարբառի Ջեննիկի խոսվածքը, Եր., 2023, 223 էջ:

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախորդ տարվա դեկտեմբերի 12-ից՝ շուրջ հինգ ամիս, արցախահայությունը ադրբեջանական կեղծ բնապահպանների կողմից շրջափակման մեջ է, կտրված է նրա կապը մայր Հայաստանի և աշխարհի հետ: Հակամարդկային ու ցեղասպան այս արարքը, խեղդամահ անելու այս քաղաքականությունը թեև բանավոր դատապարտվում է ժողովրդավար աշխարհի, անգամ Հաագայի միջազգային դատարանի կողմից, սակայն չի կոտրվում ադրբեջանցու լկտի ու լպիրշ համառությունը, և 120 հազար արցախահայերի կյանքի միակ ճանապարհը մնում է փակ: Բայց անընկճելի է իր բնիկ հայրենիքում գերեվարված արցախցու ոգին, որ հերոսաբար դիմագրավում է բոլոր զրկանքներին ու սադրանքներին: Այս պայմաններում անգամ Արցախի Հին Շեն, Մեծ Շեն և Եղցահող գյուղերի երեխաները դպրոց են հաճախում: Կարևոր չէ ինչ ճանապարհով՝ նրանք ստացել են հայկական արտադրության այն հագուստները, որ նվիրել է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»: Թեկուզ մի պահ վերականգնվել է երեխաների՝ թշնամու խլած ժպիտը և արթնացել քնած հույսը:

Հին Շենի դպրոցի երեխաները

Եղցահողի դպրոցի երեխաները

Մեծ Շենի դպրոցի երեխաները նվերները ստանալուց հետո

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Հիմնադրամի գործադիր տնօրեն - Մելիքյան Գուրգեն, ԵՊՀ արևելագիտ. ֆակ. պրոֆ., Հայաստան
Հոգաբարձ. խորհրդի նախագահ - Ավագյան Արծրուն, ԵՊՀ հայ բան. ֆակ. դեկան, պրոֆ., Հայաստան
Նախագահի տեղակալ - Մելիքյան Մերի, Հայաստան

Խորհրդի անդամներ

1. Սաֆարյան Ալեքսանդր - ԵՊՀ, պրոֆեսոր, թյուրքագիտ. ամբիոնի վարիչ, Հայաստան
2. Մուրադյան Սամվել - ԵՊՀ, բան.գիտ.դոկտոր, պրոֆ., հայ գրակ. ամբիոնի պատվավոր վարիչ, Հայաստան
3. Հարությունյան Սվետլանա -ԵՊՀ, արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, Հայաստան
4. Միրզոյան Քնարիկ – ԵՊՀ, թյուրքագիտ. ամբ. դոցենտ, Հայաստան
5. Գրիգորյան Մարատ -ԵՊՀ, աշխարհագրութ. և երկրաբան. ֆակ. դեկան, Հայաստան
6. Սեփանյան Սուրեն - ԵՊՀ դասախոս, Հայաստան
7. Շմավոնյան Շմավոն – ՀՀ վաստակավոր նկարիչ, Հայաստան
8. Պողոսյան Աշոտ-ԵՊՀ, Հայաստան
9. Քեթիպեան Արա - գրող, հասարակական գործիչ, Հայաստան.
10. Վարդանյան Արմոնդ - լիազոր ներկայացուցիչ, ԱՄՆ
11. Ալեքսանդրյան Իրինա, ԱՄՆ
12. Կյուրեղյան Վարուժ, ԱՄՆ
13. Փափայանց Շիլա, ԱՄՆ
14. Քանյան Մերի, ԱՄՆ
15. Բաշմակյան Հակոբ, ԱՄՆ
16. Զանգոզյան Վարդան, ԱՄՆ
17. Ալաջաջյան Թերեզա, ԱՄՆ
18. Ալադաղյան, Վահան, ԱՄՆ
19. Մարտին, Զարեհ, ԱՄՆ
20. Կահվե Թոնի Շուքրի, Անգլիա
21. Նազարյան Բագրատ, Անգլիա
22. Մահտեսի - Հակոբյանց Ռուբեն, Գերմանիա
23. Վանեցյան Կարեն, Շվեյցարիա
24. Շահնազարյան Հենրիկ, Շվեդիա
25. Բորոյան Ռաֆիկ, Շվեդիա
26. Սիրափյան Վարուժան, Ֆրանսիա

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝ ԱՎԱԳՅԱՆ Ա, բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ, բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ, պ. գ. թ,, պրոֆեսոր
Համարի նյութերը , շարվածքը , լուսանկարները, ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:
Տպաքանակը՝ 99:
Թերթը բաժանվում է անվճար:
Խմբագրության հասցեն՝
Երևան 375025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 212 սենյակ:
Հեռ.՝ 060 710 617, 55 - 25 – 37, 055 – 52 - 29 – 36, 060 - 52 - 29 – 36: